

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԱՅՐ ԳԱԳԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՈՆՈԲԻԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովը կայացաւ Կիրակի, 21 Փետրուար 1982, ժամը յետ միջօրէի 3-ին, տաճարին մէջ: Ներկայ էին 102 տրատու անդամներ:

28

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Բարթող Ա. Քհնյ. խրքածեան ժողովին բացումը կատարեց Աղօթքով: Յետ ստուգման օրինաւորութիւնը ժողովին, համաձայն մեր Թեմի Կանոնադրութեան յօդուած 17-ի, ծխական խորհուրդոյ ատենապետ՝ Պրն. Արթօ Պասմաճեան հրաւիրեց ներկաները կատարելու օրուան դիւանի ընտրութիւնը:

Դիւանի ԸնՏՐՈՒԹԻՒՆ.- Անդամներուն միահամուռ փափաքով ձեռնբաց քուէարկութեամբ օրուան դիւանի ատենապետ ընտրեց՝ Տղթ. Յովհաննէս Պալապանեանը, իսկ ատենադպիր՝ Տիկ. Էմմա Գալուստեանը: Դիւանի ատենապետ Տղթ. Պալապանեան դիւանին անունով շնորհակալութիւն յայտնեց իրենց հանդէպ ցոյց տրուած վստահութեան համար, եւ ապա ցեղնարկեց օրակարգի նիւթերու կանոնաւոր գործադրութեանց:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՆԱԽՈՐԴ ԾԽԱԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ.-

Օրուան դիւանի քարտուղար Տիկ. Էմմա Գալուստեան կարդաց նախորդ տարուան Ընդհանուր Ժողովի ատենադրութիւնը: Ընթերցումէն յետոյ, անդամներ՝ ներսէս Տողրամաճեան եւ Անդրանիկ Թադոսեան հարց տուին թէ իրենց կարգ մը առաջարկներ ներկայացուցած էին, որոնք չէին մատնանշուած տեղեկատուութեան մէջ: Տղթ. Արշալիր Կէօնճեան դիտել տուաւ, թէ ամէն առաջարկ կարելի չէ արձանագրել, որքան ատեն որ չեն երկրորդուած: Օրուան Ատենապետը խոստացաւ այս տարի նկատի ունենալ բոլոր առաջարկները, որոնք ի հարկէ երկրորդուած պիտի ըլլան: Ապա միաձայնութեամբ վաւերացուեցաւ նախորդ Ընդհանուր Անդամական Ժողովի ատենադրութիւնը:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ ԵՒ ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ՆԻՒԹԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆՑ.-

Օրուան Դիւանի Ատենապետը հրաւիրեց հոգեւոր հովիւը ներկայացնելու իր տեղեկատուութիւնը, որ կարդաց իր տեղեկատուութիւնը, որ վաւերացուեցաւ գնահատական արտայայտութիւններով: Ծխական խորհուրդոյ ատենադպիր՝ Պրն. Ժիրայր Այվատեան կարդաց ծխ. խորհուրդոյ տեղեկատուութիւնը: Ներկաներէն Տղթ. Յակոբ Գարակէօզ դիտել տուաւ, թէ ծխ. խորհուրդոյ տեղեկատուութեան մէջ էջ 7-ի վրայ սխալ տող մը սպրդած է: Որոշուեցաւ սրբագրել եւ ձգել զայն, եւ տեղեկատուութիւնը վաւերացուեցաւ նոյնութեամբ: ---

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԱՅՐ ԳԱԶԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
-Շար. 2-

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Պրն. Պերմ ֆազլեան ներկայացուց ԲՈՒՐՍՍԱՆ պարբերաթերթի տեղեկատուութիւն, որ միաձայնութեամբ վաւերացուեցաւ: Տիկ. Էլտա Աքքիպրիթեան կարդաց Շարաթօրեայ վարժարանի տեղեկատուութիւնը նոյնպէս գնահատանքով վաւերացուեցաւ: Նկատի ունենալով որ Տիկնանց Միութենէն ոչ ոք ներկայ էր Տիկ. Է. Գալուստեան կարդաց Եկեղեցասէր Տիկնանց Միութեան տեղեկատուութիւնը, որը նոյնպէս գնահատանքով վաւերացուեցաւ: Տոքթ. Ա. Կէօնճեան խօսք առնելով առաջարկեց, որ բոլոր մարմիններուն տարած աշխատանքները գնահատանքով արձանագրուին, երկրորդուեցաւ եւ ընդունուեցաւ ներկաներուն կողմէ:

Շարունակաբար Պրն. Գէորգ Փելթէքեան կարդաց Կոմիտաս Դպրաց Դասի տեղեկատուութիւնը, որը բարձր գնահատական արտայայտութիւններով վաւերացուեցաւ: Օրուան Ատենապետը կրկին հրաւիրեց դիւանի քարտուղար՝ Տիկ. Է. Գալուստեանը, որ ներկայացնէ Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի տեղեկատուութիւնը, տրուած ըլլալով որ ոչ ոք ներկայ էր սոյն մարմինէն: Սոյն տեղեկատուութեան վերջին պարբերականին մէջ յիշուած էր, թէ Յանձնախումբը իր լիակատար կազմով կը ներկայացնէր իր հրաժարականը եւ թէ այս տեղեկատուութիւնը վերջինն էր Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբին: Ներկաներուն կողմէ դիտել տրուեցաւ, թէ ինչպէ՞ս վերջինը եղած կրնար ըլլալ. անդամներ փափաք յայտնեցին աւելի մանրամասնութիւններ ունենալ սոյն հարցին կապակցութեամբ: Ծխ. Խորհուրդոյ ատենապետ՝ Պրն. Արթօ Պասմաճեան լայնօրէն արտայայտուեցաւ սոյն Յանձնախումբին, մասնաւորաբար վերջին շրջաններուն, Խորհուրդոյ հանդէպ բռնած ու որդեգրած անտարբեր ու արհամարհական կեցուածքին մասին, եւ յայտնեց թէ յետ երկարատեւ խորհրդակցութեանց որոշած էին Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի դիւանը փոփոխութեան ենթարկել, եւ ոչ թէ դադրեցնել Յանձնախումբի գործունէութիւնները: Այս լոճսաբանութիւններէն ետք, միաձայնութեամբ վաւերացուեցաւ սոյն Յանձնախումբի տեղեկատուութիւնը եւս:

ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԵԱՆՑ ԲՆՆԱՐԿՈՒՄ ԵՒ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ.-

Օրուան դիւանի Ատենապետը հրաւիրեց Հաշուեքննիչ Մարմնի անդամներէն Պրն. Հրաչ Թորիկեանը, որ ներկայացուց իր Մարմնի տարեկան տեղեկատուութիւնը: Որմէ կը պարզուէր, թէ քննուած էին բոլոր հաշիւները ամենայն կանոնաւորութեամբ եւ բժախնդրութեամբ: Ապա ժողովը 10 վայրկեանի դադար մը տուաւ, որպէսզի ներկաները քննեն ծխական Խորհուրդոյ եւ Մարմիններու նիւթական հաշուետուութիւնները:

Այս դադարէն յետոյ, մի առ մի քննարկուեցան Ծխ. Խորհուրդոյ եւ Մարմիններու նիւթական հաշուետուութիւնները, որոնք վաւերացուեցան նոյնութեամբ: Յառաջիկայ տարուան նախահաշիւի ներկայացման ընթացքին կարգ մը անդամներու կողմէ հարց տրուեցան նիւթական աղբիւրներու նուազումը եւ խնդրեցին միջոցներ որոնել ատոր առաջըր առնելու համար:

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ԳԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ -Շար. 3-

Ապա՝ վաւերացուեցան հաշուական տեղեկատուութիւններն ու նախահաշիւը:

Ներկաներու կողմէ Տոքթ. Ա. Կէօնճեան իսկ Խխական Խորհուրդոյ կողմէ Տոքթ. Յ. Արզումանեան առաջարկեցին զնահատանքի արտայայտութիւններ արձանագրել ծխական Խորհուրդոյ վերջին երեք յաջորդական շրջաններուն առեւտրային կանոնադրութեամբ վարած Պրն. Արթօ Պասմաճեանի անձին մասին, որ իր շրջանը աւարտած ըլլալով կը հեռանար ծխական Խորհուրդէն: Գնահատանքի խօսքեր առաջարկուեցան նաեւ Պրն. Միսաք Կոտսուզեանի, որ յանձն առած էր ծխական Խորհուրդոյ հաշուակալութիւնը ընել սիրայօժար կերպով:

Ներկաներէն կարգ մը սրտցաւ անդամներ արտայայտուեցան վերջին տարիներուն ի յայտ եկող մուտքերու նուազումներուն մասին, յատկապէս խումբ մը անդամներու իրենց տուրքերը չվճարելու պարագան: Առաջարկուեցաւ կրկին ու կրկին հետապնդել յետնեաց տուրքերը հաւաքելու եւ հասոյթի տարբեր աղբիւրներ գտնելու: Առաջարկուեցաւ նաեւ նկատի ունենալ Եկեղեցւոյ կալուածին ընդհանուր նորոգութեան պարագան, ինչպէս նաեւ Խորհրդակատարութեանց սակերուն վճարովի անդամներուն համար եւ ոչ անդամներուն համար տարբերութիւններ ըլլան: Բոլոր հարցերը յառաջիկային պիտի քննարկուին եւ նկատի պիտի առնուին:

ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻ ԿՈՂՄԷ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿԵՐՈՒՆ.- Ընտրողական Ցանձնախումբի առեւտրային Պրն. Ժիրայր Այվատեան կարդաց Ցանձնախումբի տեղեկատուութիւնը եւ պատրաստուած երկպատիկ ցանկերը համապատասխան մարմիններու, որոնք վաւերացուեցան նոյնութեամբ: Դիւանի Առեւտրային Տոքթ. Յ. Պալապանեան ժողովին ուշադրութեան յանձնեց, թէ ընտրութիւնները տեղի պիտի ունենան յառաջիկայ Կիրակի, 28 Փետրուար 1982, ժամը կէսօրէ ետք 1-5 -ի միջեւ, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան Սրահին մէջ, համաձայն ծխական Խորհուրդոյ պաշտօնական հրաւերին:

ՓԱԿՄԱՆ ԽՕՍԸ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ.- Օրակարգի հարցերը, բացի ընտրութիւնները, վերջացած ըլլալով, օրուան Առեւտրային հրաւիրեց Տէր Հայրը որ իր խօսքն ու օրհնութիւններով փակէ ժողովը: Տէր Հայրը յայտարարեց, թէ ժողովը առկախ կը մնայ մինչեւ յաջորդ Կիրակիի ընտրութիւնները: Ապա տալով իր պատգամը Պահպանիչով եւ Տէրունական Աղօթքով ժողովը փակեց երեկոյեան ժամը 6.30-ին:

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
-Շար. 4-

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Պատգամաւորներու, ծխական խորհուրդոյ, Հաշ-
լեքննիչ Մարմնի եւ Ընտրողական Յանձնախումբի
ընտրութիւնները տեղի ունեցան նախապէս որոշուածին համաձայն յա-
ջորդ Կիրակի, 28 փետրուար 1982, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան
Սրահին մէջ ժամը 1-5 -ի միջեւ: Ընտրութիւններուն մասնակցեցան
Եկեղեցւոյ 176 տրատու անդամները: Ժամը երեկոյեան 5-ին, Ընտրող-
ական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Մարմնի անդամներ Եկեղեցւոյ
Խորհրդարանին մէջ առանձնանալով կատարեցին քուէներու համընդու
աշխատութիւնը եւ զայն վերջացուցին երեկոյեան ժամը 7.15 ին եր
պատրաստեցին տեղեկատուութիւն մը ցոյց տալով ընտրութեանց արդիւնք-
ները քուէնորով միասին ըստ հետեւեալին.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ.- Հինգ հոգի ընտրելի

1.- ՏՈՔԹ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ	160	քուէ ընտրուած
2.- ՊԱՄՄԱԾԵԱՆ ԱՐԹՕ	157	"
3.- ՔԷԹԼԻ ՎԱՀԷ	149	"
4.- ՏՈՔԹ. ԿԷՕՆԾԵԱՆ ԱՐՇԱԽԻՐ	147	"
5.- ՏՈՔԹ. ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՐԱՅՐ	146	"

6.- ՄԱՄՈՒՐԵԱՆ ՆՈՒՊԱՐ	21	պահեստի
7.- ԶԱՏՐԾԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	17	"
8.- ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԷՈՐԳ	12	"
9.- ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ	8	"
10.- ՏՈՔԹ. ՔԷԶԵԱՆ ԼԵՒՈՆ	7	"

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ.- Զորս հոգի ընտրելի

1.- ՏՈՔԹ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ	160	վերընտրուած
2.- ՓԵԼԹԷՔԵԱՆ ԳԷՈՐԳ	159	ընտրուած
3.- ՏՈՔԹ. ԽԱԶԻԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ	155	վերընտրուած
4.- ՆԱԶԱՐԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	141	ընտրուած

5.- ԵՒՐԻՆԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	21	պահեստի
6.- ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ՊԱՐԳԵՒ	12	"
7.- ԱԳԹՈՐՈՍԵԱՆ ՅԱԿՈՒՐ	11	"
8.- ԱՌԵՏԵԱՆ ՏԻՐԱՆ	8	"

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ.- Հինգ հոգի ընտրելի

1.- ՊԱԼԵԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ	147	ընտրուած
2.- ԵԱՔԱՐԵԱՆ ՎԱՀԱՆ	147	"
3.- ԿԷՐԻՔԵԱՆ ԱՐԱ	145	"
4.- ՍՐՄԱՔԷՇԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ	140	"
5.- ԺԻՀԱՆԵԱՆ ԱՌԵՏԻՍ	139	"

6.- ՔԷՐԷՍԹԵՃԵԱՆ ՎԱՀԷ	36	պահեստի
7.- ԱՐՈՇԵԱՆ ԿԱՐՊԻՍ	28	"
8.- ՏԷՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ՍՐՐՈՒՀԻ	24	"
9.- ՖԱՋԼԵԱՆ ՊԵՐՃ	17	"
10.- ՄԵԼԻՔԵԱՆ ԱՐԱՄ	16	"

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԿ ՄԱՅՐ ԳԱԶԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
-Շար. 5 ԵՆ ՎԵՐԶ-

ՀԱՇՈՒԵՔՆՆԻԿ ՄԱՐՄԻՆ.- ԵՐԵՔ ԳՈԳԻ ԸՆՏՐԵԼԻ

1.- ԿՈՒՏՍՈՒԳԵԱՆ ՄԻՍԱՔ	՝	156	ընտրուած
2.- ԹՈՐԻԿԵԱՆ ՀՐԱԶ	՝	147	"
3.- ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԹՈՎՄԱՍ	՝	136	"

4.- ԵՒՐԻՆԵԱՆ ՍՈՒՐԷՆ	՝	25	պահեստի
5.- ԷՍԷՆ ՊԵՐՃ	՝	19	"
6.- ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ	՝	15	"

Բարթոլ. Ա. Բեչյ. Խրեաճեան

ԲԱՐԹՈՂ Ա. ԲԷՅՅ. ԽՐ.ՔԱԾԵԱՆ
ՀՈՎԻԼ ԵՆ ՆԱԽԱԳԱՆ

Սարգսյան

ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
ԴԻԼԱՆԻ ԱՌԵՆԱՍԿԵՄ

Ս. Գրիգոր

ՏԻԿ. ԷՄՄԱ ԳԱԼՈՒՍԵԱՆ
ԴԻԼԱՆԻ Զարտուղար